

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Տ Ն Օ Ր Ե Ն

Հ Ր Ա Մ Ա Ն 766

ՀՀ ԱՆ «ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
31.07.2019թ. ԹԻՎ 392 ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ 3-ՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«09» դեկտեմբերի 2019թ.

ք. ԵՐԵՎԱՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 23-րդ հոդվածի 7-րդ կետով, 33-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով, 34-րդ հոդվածով, ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի Կանոնադրության 8.11-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով, հաշվի առնելով Ընկերության հաստիքացուցակում կատարված փոփոխությունները և Ընկերության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության ներքին կարգապահական կանոնները, աշխատակիցների աշխատանքային գործառույթները և այլ կարգերը հաստատելու մասին 31.07.2019թ. թիվ 392 հրամանով հաստատված՝ «ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության աշխատակիցների աշխատանքային գործառույթները» հավելված 3-ում (այսուհետ՝ Հավելված 3) կատարել փոփոխություններ և լրացումներ:
2. Հավելված 3-ով սահմանված բուժական հարցերով տնօրենի տեղակալի պարտականությունները փոփոխել և շարադրել նոր խմագրությամբ՝ համաձայն սույն հրամանի անբաժանելի մասը համարվող Հավելված 1-ի:
3. Հավելված 3-ում կատարել լրացում՝ նոր գլուխ շարադրելու միջոցով, և սահմանել ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի տեղակալի աշխատանքային պարտականությունները՝ համաձայն սույն հրամանի անբաժանելի մասը համարվող Հավելված 2-ի:

4. Սույն հրամանով հաստատված հավելվածները կցել ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության աշխատակիցների աշխատանքային գործառույթները» սահմանող Հավելված 3-ին :
5. Ընկերության քարտուղարության պետ՝ Մերի Մուրադյանին հանձնարարել ապահովել սույն հրամանով հաստատված Հավելված 3-ի ինկորպորացված տարբերակի հրապարակումը ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում տեղադրելու միջոցով կամ բոլոր այն անձանց համար տեսանելի և հասանելի վայրում տեղադրելով, որոնց ուղղված է Հավելված 3-ի ինկորպորացված տարբերակը:
6. Սույն հրամանով հաստատված հավելվածներն ուժի մեջ են մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից՝ 09.12.2019թվականից:

ՏՆՕՐԵՆ՝

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

1. Տնօրենի տեղակալը պարտավոր է իրականացնել միայն այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, աշխատանքային պայմանագրով, Բուժհաստատության ներքին կարգապահական կանոններով, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով և այլ կանոնակարգող փաստաթղթերով:
2. Անվերապահորեն ապահովել և անձամբ պաշտպանել ՀՀ սահմանադրությամբ և օրենսդրությամբ սահմանված մարդու իրավունքները, մշտապես հետևել դրանց կատարմանը՝ այն համարելով առաջնահերթություն բաժանմունքում բուժվող պացիենտի բուժման գործընթացի ընթացքում:
3. Տնօրենի բացակայության ընթացքում, վերջինիս հանձնարարությամբ, լիարժեք փոխարինել նրան:
4. Պացիենտի իրավունքների ցանկացած խախտման դեպքում անհապաղ զեկուցել տնօրենին, հետամուտ լինել դրանց վերականգմանը:
5. Աշխատանքային պարտականությունները կատարելու ընթացքում կրել բժշկական համազգեստ:
6. Լինել ճշտապահ, անվերապահորեն և հետևողական կատարել Բուժհաստատության ներքին կարգապահական կանոնները, վերահսկել Բուժհաստատության անձնակազմի կողմից դրանց կատարումը:
7. Ներքին կարգապահական կանոնների յուրաքանչյուր հայտնաբերված խախտման վերաբերյալ անհապաղ տեղեկացնել Բուժհաստատության տնօրենին:
8. Ապահովել Բուժհաստատության անձնակազմի անընդհատ և շարունակական կրթման գործընթացը, նպաստել ավագ, միջին և կրտսեր անձնակազմի մասնագիտական գիտելիքի և պրակտիկ ունակությունների զարգացմանը:
9. Մասնակցել, իսկ տնօրենի բացակայության դեպքում, նաև վարել ամենօրյա գործակարգավարական խորհրդակցությունները /ճեպաժողով կամ ճեպանցիկ ժողով/, լսել հերթապահ բժշկի զեկույցը, քննարկել բարդ դեպքերը, անհրաժեշտության դեպքում քննարկման առարկա դարձնել բացառապես բուժական հարցեր:
10. Կազմակերպել և իրականացնել դասընթացներ ավագ, միջին և կրտսեր անձնակազմի կրթման նպատակով՝ յուրաքանչյուր տարվա համար կազմված և Բուժհաստատության տնօրենի կողմից հաստատված թեմատիկ պլանների և ժամանակացույցի համապատասխան:
11. Վերահսկել բաժանմունքների աշխատանքը բուժական գործի կազմակերպման և այդ շրջանակից դուրս առաջացող կամ առկա խնդիրների լուծմանը վերաբերող հարցերի շրջանակներում:

12. Տնօրենի բացակայության ընթացքում հանձնարարականներ, հրահանգներ և ցուցումներ տալ Բուժհաստատության բուժական գծով տնօրենի տեղակալին, բաժանմունքի վարիչներին, ծառայությունների ղեկավարներին, Բուժհաստատության ողջ անձնակազմին, որոնք պարտադիր են անվերապահորեն կատարման համար:
13. Տնօրենի տեղակալի հանձնարարականների, հրահանգների և ցուցումների կատարումը կարող է կասեցվել բացառիկ դեպքերում, միայն տնօրենի կողմից, գրավոր հիմնավորումների ներկայացման և դրա հիման վրա տնօրենի կողմից բանավոր կամ գրավոր հանձնարարականով:
14. Ապահովել հիվանդության պատմագրերի պատշաճ վարման և լրացման գործընթացը Բուժհաստատության՝ առանց բացառության բոլոր բաժանմունքներում, անհրաժեշտության դեպքում դրանցում կատարել գրառումներ կամ հանձնարարել գրառումների կատարումը բուժող բժշկին, մինչև ժամանակ պարտադիր հաստատել այդ գրառումներին իր ստորագրությամբ:
15. Կազմակերպել Բուժհաստատության հոգեբուժական հանձնաժողովի աշխատանքները օրենքով, այլ կանոնակարգող փաստաթղթերով կամ տնօրենի հրամաններով սահմանված ընթացակարգերին խիստ համապատասխան:
16. Ստուգել և իր ստորագրությամբ հաստատել Բուժհաստատության հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությունը, դրանց հիման վրա տալ հանձնարարականներ պացիենտի հետագա վարման, բուժման, դուրս գրման կամ այլ գործընթացների վերաբերյալ:
17. Իր սեփական նախաձեռնությամբ, կամ օրենսդրությամբ և այլ կանոնակարգող փաստաթղթերով սահմանված կարգով իրականացնել պացիենտի արտահերթ հետազոտման գործընթաց հիվանդանոցային հոգեբուժական հանձնաժողովի միջոցով:
18. Սահմանել վերահսկողություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված Բուժհաստատության անձնակազմի կողմից ՇՄՁ ստացված և գործունեությունը շարունակելու համար անհրաժեշտ կրեդիտների հաշվառման նկատմամբ:
19. Պարբերաբար, բուժական գծով տեղակալի հետ, իրականացնել անձնակազմի՝ պարբերական, առնվազն հինգ տարին մեկ անգամ, նախապես կազմված և հաստատված ժամանակացույցին համապատասխան, բուժական ծառայությունների աշխատակցի անհատապես յուրաքանչյուրի մասնագիտական գիտելիքների և պրակտիկ ունակությունների գնահատում, դրանց արդյունքների քննարկում և մասնագիտական կատարելագործման առաջարկների ներկայացում:
20. Մասնակցել և նախագահել գորակոչիկների հանձնաժողովային հետազոտման աշխատանքները, վերահսկել և կազմակերպել այդ հանձնաժողովի բնականոն աշխատանքը, անհրաժեշտության դեպքում, ներգրավելով հավելյալ մասնագետներ:
21. Վերահսկել գորակոչիկների փորձաքննության արդյունքների, հանձնաժողովի արձանագրությունների լրացման գործընթացը, ստորագրել դրանք և պատշաճ ժամկետներում ներկայացնել շահագրգիռ մարմիններին:
22. Համագործակցել իրավապահ և դատական մարմինների, դրանց ներկայացուցիչների հետ պացիենտներին վերաբերվող հարցերի շրջանակներում, ապահովել ՀԱՊԱԿ ՓԲԸ-ի պատշաճ ներկայացվածությունը այդ մարմիններում, ի շահ պացիենտների և ի պաշտպանություն ՀԱՊԱԿ ՓԲԸ ձևավորված մոտեցումների և դիրքորոշումների:

23. Վերահսկել և պատասխանատու լինել Բուժհաստատության հատուկ հսկողության ռեժիմի դատապարտյալների և ստացիոնար փորձաքննությունների բաժանմունքներում բուժում ստացող կամ փորձաքննվող պացիենտների հիվանդության պատմագրերի վարման և պատշաճ լրացման համար, այդ թվում, հիվանդության պատմագրի ձևաթղթի բոլոր դաշտերի լրացված լինելը, դեղերի նշանակումները, դրանց փոփոխությունները և նշանակումների դադարեցումը, գրառումների բովանդակությունը և ծավալը, գրառումների համապատասխանությունը իրականությանը, սահմանված հաճախությամբ գրառումների առկայությունը, այլ անհրաժեշտ՝ պացիենտին վերաբերվող փաստաթղթերի առկայությունը, պացիենտի հետազոտման արդյունքները:
24. Մասնակցել բուժհաստատությունում տնօրենի հրամանով գործող մշտական հոգեբուժական հանձնաժողովի աշխատանքներին:
25. Համակարգել բժիշկ-հոգեբույժների, հոգեբանների, սոցիալական աշխատողների աշխատանքը պացիենտների բուժման և սոցիալական վերականգման և ներառման նպատակով:
26. Մասնակցել սանիտարա-հիգիենիկ միջոցառումների իրականացմանը, առանց բացառության բոլոր բաժանմունքներում, խստորեն հետևել և հետամուտ լինել սանիտարական նորմերի և նորմատիվ իրավական փաստաթղթերի պահանջների իրականացմանը բուժհաստատությունում:

Հավելված 1

Հաստատված է

ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման
պաշտպանության կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի

2019 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 765 հրամանով

1. Բուժական հարցերով տնօրենի տեղակալը պարտավոր է իրականացնել միայն այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, աշխատանքային պայմանագրով, Բուժհաստատության ներքին կարգապահական կանոններով, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով և այլ կանոնակարգող փաստաթղթերով:
2. Անվերապահորեն ապահովել և անձամբ պաշտպանել ՀՀ սահմանադրությամբ և օրենսդրությամբ սահմանված մարդու իրավունքները, մշտապես հետևել դրանց կատարմանը՝ այն համարելով առաջնահերթություն բաժանմունքում բուժվող պացիենտի բուժման գործընթացում:
3. Պացիենտի իրավունքների ցանկացած խախտման դեպքում անհապաղ զեկուցել տնօրենին, հետամուտ լինել դրանց վերականգմանը:
4. Աշխատանքային պարտականությունները կատարելու ընթացքում կրել բժշկական համազգեստ:
5. Լինել ճշտապահ, անվերապահորեն և հետևողական կատարել Բուժհաստատության ներքին կարգապահական կանոնները, սահմանել վերահսկողություն Բուժհաստատության անձնակազմի կողմից դրանց կատարման նկատմամբ:
6. Անվերապահորեն կատարել տնօրենի, իսկ վերջինիս բացակայության դեպքում նաև տնօրենի տեղակալի բանավոր կամ գրավոր հանձնարարությունները, հանձնարարականները, հրամանները, հրահանգները, ցուցումները:
7. Ներքին կարգապահական կանոնների յուրաքանչյուր հայտնաբերված խախտման վերաբերյալ անհապաղ տեղեկացնել Բուժհաստատության տնօրենին:
8. Վերահսկել հատուկ հսկողության և փորձաքննությունների բաժանմունքների աշխատանքը բուժական գործի կազմակերպման և այդ շրջանակից դուրս առաջացող կամ առկա խնդիրների լուծմանը վերաբերող հարցերի շրջանակներում:
9. Տնօրենի բուժական գծով տեղակալի հանձնարարականների, հրահանգների և ցուցումների կատարումը կարող է կասեցվել տնօրենի կողմից՝ դրանց ոչ նպատակահարմար լինելու հիմնավորմամբ:
10. Սահմանել մշտական հսկողություն բաժանմունքներում ստացիոնար բուժում ստացող կամ գտնվող ոչ հոծաբազմաբույ բուժում ստացող պացիենտների առողջական վիճակի և նրանց՝ հիվանդանոցում գտնվելու ընթացքում իրավական հիմքերի առկայության նկատմամբ:
11. Առնվազն շաբաթը երկու անգամ, անձամբ և առերես հանդիպել և բուժող բժշկի ներկայությամբ զրուցել բոլոր ոչ հոծաբազմաբույ բուժում ստացող պացիենտների հետ, նաև նախադատավարական շրջանում:
12. Անձնապես գրառումներ կատարել ոչ հոծաբազմաբույ բուժում ստացող պացիենտների հիվանդության պատմագրերում՝ դատական նիստերի արդյունքների, պացիենտների ցանկությունների կամ դրանց մերժման վերաբերյալ:

13. Հոգեբուժական բաժանմունքներում գտնվող ոչ հոժարակամ պացիենտների իրավունքների ցանկացած խախտման դեպքի հայտնաբերման դեպքում գրավոր զեկուցագրով անհապաղ տեղեկացնել տնօրենին, իսկ նրա բացակայության դեպքում տնօրենի տեղակալին:
14. Անձամբ վերահսկել ոչ հոժարակամ բուժում ստացող պացիենտների դատարան ներկայացվող փաստաթղթերի բովանդակությունը, ամբողջականությունը և հիմնավորվածությունը:
15. Յուրաքանչյուր ոչ հոժարակամ բուժում ստացող պացիենտի համար սահմանել հանձնաժողովային հետազոտման ժամանակացույց, առնվազն ամիսը մեկ անգամ հաճախականությամբ, բուժման շարունակականության որոշման նպատակով և այն ներկայացնել հաստատման տնօրենին, իսկ նրա բացակայության դեպքում տնօրենի տեղակալին:
16. Ապահովել հանձնաժողովային զննման աշխատանքներն ըստ հաստատված ժամանակացույցի, անձամբ մասնակցել և նախագահել ոչ հոժարակամ բուժում ստացող պացիենտների հոգեբուժական հանձնաժողովների աշխատանքները:
17. Վերահսկել ոչ հոժարակամ բուժում ստացող պացիենտների հիվանդության պատմագրերի պատշաճ և լիարժեք լրացված լինելը, ապահովել բոլոր հարակից անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը պատմագրերում,
18. Ապահովել ոչ հոժարակամ բուժում ստացող պացիենտների հարազատների, ընտանիքի անդամների, օրինական ներկայացուցիչների հետ մշտական կապը, կատարել բացատրական աշխատանքներ նրանց հետ:
19. Ոչ հոժարակամ բուժում ստացող պացիենտներին իրազեկել իրենց իրավունքների և պարտականությունների մասին:
20. Պարբերաբար տնօրենին և տնօրենի տեղակալին ներկայացնել գրավոր զեկուցագիր յուրաքանչյուր ոչ հոժարակամ բուժում ստացող պացիենտի առողջական վիճակի, նրա իրավական կարգավիճակի, դրա փոփոխության, հանձնաժողովային հետազոտությունների արդյունքների վերաբերյալ:
21. Բուժհաստատության հայցադիմումների վերաբերյալ դատարանների որոշումների ստացումից հետո դրանց կատարման վերաբերյալ գրավոր տեղեկացնել համապատասխան դատարանին:
22. Մասնակցել բուժհաստատության հոգեբուժական հանձնաժողովի աշխատանքներին օրենքով, այլ կանոնակարգող փաստաթղթերով կամ տնօրենի հրամաններով սահմանված ընթացակարգերին խիստ համապատասխան:
23. Ստուգել և իր ստորագրությամբ հաստատել Բուժհաստատության հոգեբուժական հանձնաժողովի այն եզրակացությունները, որի նիստը նախագահել է ինքը, դրանց հիման վրա տալ հանձնարարականներ պացիենտի հետագա վարման, բուժման, դուրս գրման կամ այլ գործընթացների վերաբերյալ:
24. Իր սեփական նախաձեռնությամբ, նախապես տեղեկացնելով տնօրենին կամ նրա բացակայության դեպքում տնօրենի տեղակալին, պացիենտի խնդրանքով կամ պահանջով կամ օրենսդրությամբ և այլ կանոնակարգող փաստաթղթերով սահմանված կարգով իրականացնել պացիենտի արտահերթ հետազոտման գործընթաց հիվանդանոցային հոգեբուժական հանձնաժողովի միջոցով:
25. Ապահովել ստացիոնար ինչպես հատուկ հսկողության, այնպես էլ ընդհանուր հսկողության բաժանմունքներում դատա-հոգեբուժական ստացիոնար փորձաքննության

նպատակով բուժհաստատություն ընդունված պացիենտների պատշաճ ախտորոշումը և բուժումը, նրանց հիվանդության պատմագրերի վարումը:

26. Ապահովել հատուկ հսկողության բաժանմունքում բուժում ստացող պացիենտների բուժման պատշաճ գործընթացը, առնվազն յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ տնօրենի հրամանով ստեղծված հիվանդանոցի հոգեբուժական հանձնաժողովի աշխատանքներին անձնական մասնակցության միջոցով գնահատել այդ պացիենտների հոգեկան առողջության վիճակը, բուժման առաջընթացը, և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկներ առանձին պացիենտների բուժման և պահպանության ռեժիմի փոփոխության վերաբերյալ:
27. Վերահսկել և պատասխանատու լինել Բուժհաստատության բաժանմունքներում ստացիոնար ոչ հոծարակամ բուժում ստացող պացիենտների հիվանդության պատմագրերի վարման և պատշաճ լրացման համար, այդ թվում, հիվանդության պատմագրի ձևաթղթի բոլոր դաշտերի լրացված լինելը, դեղերի նշանակումները, դրանց փոփոխությունները և նշանակումների դադարեցումը, գրառումների բովանդակությունը և ծավալը, գրառումների համապատասխանությունը իրականությանը, սահմանված հաճախությամբ գրառումների առկայությունը, այլ անհրաժեշտ՝ պացիենտին վերաբերվող փաստաթղթերի առկայությունը, պացիենտի հետազոտման արդյունքները:
28. Համագործակցել իրավապահ և դատական մարմինների, դրանց ներկայացուցիչների հետ պացիենտներին վերաբերվող հարցերի շրջանակներում, կոորդինացնել և ապահովել ՀԱՊԱԿ ՓԲԸ-ի պատշաճ ներկայացվածությունը այդ մարմիններում, ի շահ պացիենտների և ի պաշտպանություն “ՀԱՊԱԿ” ՓԲԸ ձևավորված մոտեցումների և դիրքորոշումների:
29. Մասնակցել ամենօրյա գործակարգավարական խորհրդակցություններին /ճեպաժողով կամ ճեպանցիկ ժողով/, լսել հերթապահ բժշկի զեկույցը, քննարկել բարդ դեպքերը, անհրաժեշտության դեպքում քննարկման առարկա դարձնել բացառապես բուժական հարցեր:
30. Մասնակցել սանիտար-հիգիենիկ միջոցառումների իրականացմանը, առանց բացառության բոլոր բաժանմունքներում, խստորեն հետևել և հետամուտ լինել սանիտարական նորմերի և նորմատիվ իրավական փաստաթղթերի պահանջների իրականացմանը բուժհաստատությունում:
31. Ներկայացնել առաջարկներ և իրականացնել հոգեկան հիվանդությունների բուժման և վարման ժամանակակից մեթոդների ներդրումը Բուժհաստատությունում:
32. Մշակել, կազմակերպել մասնագիտական քննարկումներ, ներկայացնել հաստատման հոգեկան հիվանդությունների բուժման ստանդարտ դեղորայքային սխեմաները: Պարբերաբար, առնվազն ամիսը մեկ անգամ, տնօրենին, իսկ նրա բացակայության դեպքում տնօրենի տեղակալին զեկույցել գործընթացի և արդյունքների վերաբերյալ:
33. Մշտապես, միջազգային փորձի և արդի գիտաբժշկական գիտելիքի հիման վրա կատարելագործել հոգեկան հիվանդությունների բուժման սխեմաները, ներկայացնել դրանք հաստատման և հետամուտ լինել դրանց կիրառմանը բուժական բաժանմունքներում: